ՊԱՇՏՈՆ	Հաճախորդների սպասարկման բաժնի ղեկավար
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	12-ժամյա գրաֆիկ ,
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	06/05/24թ.
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	02/06/24թ.
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն Հաճախորդների սպասարկման բաժնի ղեկավարի հաստիքը զբաղեցնելու համար փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածուի, ով պատասխանատու է ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախորդների հաշիվների վարման գործընթացի վերահսկում:
- ԼՍ ծրագիր ներմուծված հաճախորդների տվյալների ստուգում:
- Ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում և սահմանաչափերում մասնաճյուղի աշխատակիցների կողմից կատարված գործարքների ստուգում և հաստատում:
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված միջնորդավճարների և այլ վճարների գանձումների իրականացման վերահսկում:
- Հաճախորդներին իրենց հաշիվների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, վճարային փաստաթղթերի կրկնօրինակների և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթերի տրամադրման գործընթացների վերահսկում:
- Հաճախորդներին աջակցություն Բանկի քարտերի ակտիվացման, մոբայլ հավելվածներում սինքրոնացման հարցերում
- Հաճախորդներին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ համապատասխան խորհրդատվության/տեղեկատվության տրամադրում:
- Բանկի կողմից մատուցվող ծառայությունների և պրոդուկտների վաճառքի իրականացում:
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ:
- Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված պահանջների իրականացման հսկողություն և պահպանում:
- Իրեն վստահված Բանկի գույքի նպատակային և միայն ծառայողական նպատակներով շահագործում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բանկային կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվության կրում,
- Բանկում սահմանված ներքին, կարգապահական աշխատանքային ռեժիմի և գործարար էթիկայի կանոնների պահպանում, աշխատողների արտաքին տեսքի

վերաբերյալ միասնական ստանդարտների պահպանում, ղեկավարության կողմից իրեն տրված հանձնարարականների ճիշտ և ժամանակին կատարում

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ բանկային համակարգում,
- Կանխիկ դրամի հետ աշխատելու փորձ,
- Դրամաճանաչություն
- ՀՀ բանկային օրենսդրության իմացություն,
- Համակարգչային գիտելիքների իմացություն,
- Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն
- Ղեկավարման հմտություններ,
- Որոշումներ կայացնելու ունակություն,
- Ինքնակազմակերպման և ժամանակի կառավարման հմտություններ,
- Գերազանց միջանձնային և խնդիրներ լուծելու հմտություններ,
- Հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություն,
- Վաճառքի հմտություն,
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն,
- Մանրուքների հանդեպ ուշադիր, լավ կազմակերպված անձնավորություն, ով ունակ է միաժամանակ մի քանի առաջադրանքներ կատարել:
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/54 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար

որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: